գին։ Եւ նորա տկամայ կամօք զիջեալ՝ եկն 'ի Կոստանդի-նուպոլիս (1717) յամսեանն Օգոստոսի 'ի տօնի Վերափոխման Կուսին, զոր ամենայն սիրով և գթով ընկալեալ ժողովրդեանն՝ վաղվաղակի գրեցին թուղթ առ միաբանսն Ս. Յակոբայ, և ծանուցին նոցա զեղեալսն. եւ կոնդակաւ կարգեցին Աթոռական տանն Երուսաղէմի զնոյն ինքն Հանն (Յովհաննէս) վարդապետ Երուսաղէմացի, մինչեւ գնասցէ անդր Գրիգոր վարդապետ։

Իսկ ինքն Գրիգոր Պատրիարք մնաց առ ժամանակ մի 'ի Կոստանդինուպոլիս, զի 'ի միասին ընդ Յովհաննու վարդապետի հոգասցեն վասն այնչափ դիզացեալ պարտուց Աթոռոյն, որ հասեալ էր 9800 քսակ։ Եւ այնչափ եղեւ փոյթ նորա վասն այսր, մինչեւ զարմացուցանել և զայլազգիս։ Էարկ ապա 'ի պարանոց իւր զերկաթի շղթայ ծանր, և աղխեաց զայն, և ուխտեաց Աստուծոյ ոչ առնուլ 'ի բաց զշղթայն յանձնէ իւրմէ, մինչեւ նա ինքն այց արասցէ տառապանաց Աթոռոյն. եւ յաւուրս տօնից կացեալ 'ի դրան եկեղեցւոյ Ս. Աստուածածնի շղթայիւք իւրովք՝ ձայնէր լալով առ ժողովուրդսն, որք մտանէին յեկեղեցի, ասելով առ նոսա 'ի դիմաց Աթոռոյն Երուսաղէմի. ողորմեցարուք, ողորմեցարուք ինձ, հաւատացեալքդ Քրիստոսի, զի տունն իմ 'ի դրաւի է, և որդիք իմ հեռացեալ են յինէն, և ես մատնեալ 'ի դերութիւն. նըստեալ եմ 'ի սուգ դառնութեան, ողորմեցարուք ինձ. հանէք և լուծէք զծանրութիւն պարտուցս՝ որք դիզեալ են 'ի վերայ իմ. ես Աթոռ էի Առաքելոյն Յակոբայ, այժմ Աթոռ եմ պարտուց, և ոչ ոք է որ ձեռն կարկառէ ինձ։ Զայսպիսի գործ գործեալ սորա՝ շարժեաց զժողովուրդն առհասարակ 'ի գութ, և ժողովեաց բազում ինչ յօգնութիւն Աթոռոյն։ Եւ այն շղթայք նորա մնացին 'ի պարանոցի նորուն ամս 8, եւ վասն այսր պատճառի կոչեցաւ Շղթայակիր, և այլազգիսն Զինծիրլի վարդապետ։

Այլ 'ի ժամանակի ասա՝ մինչդեռ 'ի Կոստանդինուպոլիս էր Շղթայակիր Գրիգոր Պատրիարք, և 'ի միասին ընդ Յովհաննու վարդապետի փոյթ տանէր վասն թեթեւութեան պարտուց Երուսաղէմի՝ եղեւ հրկիզութիւն մեծ 'ի քաղաքի անդ, և այրեցան բազում տունք և ոգիք, ընդ